ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՐԱԾՔԱՃՅՈՒՂԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՔ

Մանասյան Վ.Գ.*

Ամփոփում: Նոր ազգային ագրարային քաղաքականություն մշակելու անհրաժեշտությունն է հիմնավորվել և հանրապետությունը հայրենական արտադրության պարենային ապրանքներով ու գյուղատնտեսական հումքով ապահովելուն միտված առանձին գյուղատնտեսական գոտիների ագրարային քաղաքականության և միջգոտիական ապրանքափոխանակության նշանակությունն է պարզաբանվել: Հանրապետության գյուղատնտեսական արտադրության մեջ աշխատանքի տարածքաճյուղային բաժանման զարգացման կազմակերպչատնտեսական մեխանիզմը կատարելագործելու, գյուղատնտեսական արտադրանքի, հումքի և պարենամթերքի միասնական ապրանքարտադրող համակարգ ձևավորելու, ինչպես նաև ԵԱՏՄ-ի, ԵՄ-ի և տարածաշրջանի շուկաներ հասցնելուն մտադրված լինելու միջոցառումներ են առաջարկվել: Հանրապետության ազգային փոքրամասնությունների ագրարային հատվածի ավանդական էթնիկական մասնագիտացման սոցիալ-տնտեսական ու ագրոէկոլոգիական բազմատարր հարցերն են քննության առնվել: Հայրենական ագրարային հատվածի էկոլոգիացման համար երկրագործության հարմարվողական-լանդշաֆտային համակարգին անցնելու անհրաժեշտությունը, գյուղատնտեսական արտադրության գործառնության և բնակչության կենսամակարդակի ու գյուղական ապրելակերպի բարելավման համար գիտականորեն հիմնավորված հենքի ստեղծումն է հիմնավորվել:

Բանալի բառեր. աշխատանքի տարածքաճյուղային բաժանում, հիմնավորված տեղաբաշխում և գոտիական մասնագիտացում, պարենային ինքնաբավություն, գյուղատնտեսական ապրանքարտադրող, գյուղատնտեսական գոտիներ, ազգային փոքրամասնություններ, հարմարվողական-լանդշաֆտային համակարգ:

JEL Classification: F42, J43, J48, N55

1. Ներածություն

ՀՀ ագրարային քաղաքականության առաջնահերթ հիմնախնդիրներին վերաբերող հայեցակարգային դրույթները և բազմաթիվ գիտա-

* Վոլոդյա Գուրգենի Մանասյան – ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտություն ամբիոնի դոցենտ, աշխ. գ. թ.: E-mail: manasianvolodya@mail.ru.

կան հրապարակումները ներքին ու արտաքին մի շարք պատճառներով տնտեսության ագրարային հատվածի զարգացումը և գյուղում արմատական սոցիալ-տնտեսական բարեփոխումներն ամբողջովին չեն արտացոլում: ՀՀ տնտեսության ագրարային հատվածի զարգացման օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը, հանրապետական, գերատեսչական, ճյուղային ու մարզային ծրագրերը և գյուղատնտեսական արտադրանքի, հումքի ու պարենամթերքի կարգավորման շուկաները, խոշոր ներդրումային նախագծերը նույնպես ճյուղում տեղի ունեցող դրական և բացասական դրսևորումներն ամբողջությամբ չեն ընդգրկում: Դա՝ որպես հանրապետության պարենային անվտանգության ապահովման հիմք և գյուղական տարածքների զարգացման առաջնահերթություն, վերաբերում է նաև գյուղատնտեսական արտադրության մեջ աշխատանքի տարածքաճյուղային բաժանման հիմնախնդրին:

Այժմեական տնտեսվարման շուկայական մեխանիզմի պայմաններում ՀՀ տնտեսության ագրարային հատվածում աշխատանքի տարածքաճյուղային բաժանումը հանդես է գալիս որպես տարբեր գյուղատնտեսական գոտիների, առանձին մարզերի ու տարածաշրջանների փոխադարձ կապված մասնագիտացում նախ և առաջ գյուղատնտեսական արտադրանքի որևէ տեսակի արտադրության գծով, որոնց ծավալները, ինտենսիվությունը և ապրանքային բեռնափոխադրումների ուղղությունները պայմանավորված են, մի կողմից պահանջարկով և առաջարկով, մյուս կողմից՝ ագրոպարենային շուկայի պարենային հատվածի պետական կարգավորման հնարավորություններով: Այն հանրապետության տարբեր գոտիներում փոփոխվում է գյուղատնտեսական արտադրանքի որևէ տեսակի արտադրության հիմնավորված տեղաբաշխման, մասնագիտացման խորացման և համակենտրոնացման բարձրացման ամբողջական ներգործությամբ, որոնց տնտեսական և հատկապես, ագրոկլիմայական պայմանները, ավանդական էթնիկական մասնագիտացման առանձնահատկությունները և աշխարհագրական դիրքը առավել բարենպաստ են դրանց արտադրության համար:

2. Վերլուծական մաս

Հայաստանի լեռնային երկիր լինելու հետևանքով[1] նրա տարածքի արտահայտված ուղղաձիգ գոտիականությունը, ռելիեֆի մասնատվածությունը, սակավահողությունը, աշխարհագրական դիրքն ու տարածաշրջանային աշխարհաքաղաքական իրավիճակը, ինչպես նաև սահմանափակ առևտրային ուղիներն ու տրանսպորտային մեծ ծախսերը, համարվելով խիստ ներգործող խթան կամ էական արգելք, մշտապես կարևորվել են՝ գյուղատնտեսական արտադրության բազմակողմանիորեն հիմնավորված գոտիական մասնագիտացումը կանխորոշելու համար: Պարզվել է նաև, որ ՀՀ լեռնային երկրագործության հարմարվողական-լանդշաֆտային համակարգին անցնելը կարևոր նախապայման է համարվում գյուղատնտեսական հողատեսքերի կազմի ու ցանքատարածությունների կառուցվածքի հարաբերակցությունը, դրանց օգտագործման բնույթը, ագրոլանդշաֆտների ու ագրոէկոհամակարգերի բնականոն գործառույթն ապահովող նորարարական տեխնոլոգիաների, գործունեության ուղղությունների և միջոցների օգտագործումը սահմանելու դեպքում, այսինքն՝ ՀՀ մարզերում և տարածաշրջաններում գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման կայուն զարգացում ապահովելու տեսակետից կարելի է կողմնորոշվել տարածքի կազմակերպման հարմարվողական-լանդշաֆտային սկզբունքի վրա[2]: Ուստի աշխատանքի տարածքաճյուղային բաժանումը ՀՀ տարբեր գյուղատնտեսական գոտիների արտադրական մասնագիտացման և միջգոտիական կոոպերացիայի, մասնագիտացված արտադրանքի ու ծառայությունների բարելավման օրինաչափ, բայց բարդ և բազմակողմանի գործընթաց է, որը Հայաստանի ագրարային հատվածի զարգացման առանձին փուլերում մերթ բուռն կերպով է զարգացել, ի վիճակի լինելով ագրարային տեսակետից հասնել տնտեսապես զարգացած երկրներին, մերթ առավելապես ներքին պատճառներով արագորեն զիջել է իր դիրքերը: Շուկայական բարեփոխումների տարիներին հանրապետության յուրաքանչյուր մարզի և տարածաշրջանի կողմնորոշումը սննդամթերքի անվտան-

---

1 ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարություն, 2010 թ. դեկտեմբերի 1-ի №1476-Ն որոշում: Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն 2019 թ. դեկտեմբերի 19-ի №1886-Լ որոշում:

2 Վ. Մանասյան, 2017, N1, էջ 23:

գության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովմանը հանգեցրեց նախապես ձևավորված աշխատանքի տարածքաճյուղային բաժանման ամբողջականության խախտվելուն: Այն նպաստեց հանրապետության տարածքի ագրոարտադրական ռեսուրսային ներուժի և տնտեսվարման ազգային-պատմական առանձնահատկությունների անարդյունավետ օգտագործմանը: Արդյունքում օրինակ՝ 2019-2020թթ. մարզերի միջև մեկ շնչին ընկնող հաց և հացամթերքի միջին տարեկան սպառման տարբերությունը հասել էր 2,5 անգամ, շաքարի՝ 1,2, մսի և մսամթերքի՝ 2,7, բուսական յուղի՝ 2,0, կաթի և կաթնամթերքի՝ 3,3, ձվի՝ 3,1, մրգի և հատապտուղների՝ 6,1, բանջարեղենի՝ 6,3, կարտոֆիլի՝ 1,3, ձկան և ձկնեղենի՝ 8,5 անգամ[3]:

ՀՀ ազգային պարենային հաշվեկշռի տվյալների վերլուծությունը վկայում է, որ այսօր հանրապետության ոչ մի մարզ կամ տարածաշրջան ի վիճակի չէ իր բնակչությանը պարենամթերքների ամբողջական տեսականիով, նույնիսկ հիմնավորված սնման չափաքանակներով ապահովել: Միայն մարզերի և տարածաշրջանների մոտ 20 տոկոսը կարող է տեղական բնակչության պահանջները բավարարելու համար նվազագույն չափերով կենսականորեն կարևորագույն պարենային մթերքների հիմնական տեսակներն արտադրել: Մնացած մարզերը և տարածաշրջանները բնակչությանը սեփական պարենամթերքներով սպառման հիմնավորված չափաքանակներից զգալիորեն ավելի քիչ են ապահովում: Հանրապետությունում միջմարզային պարենային կապերի զարգացման հաշվին հացահատիկի և բանջարեղենի սպառման 18-23 տոկոսը, կարտոֆիլի 10-12 տոկոսը, կաթի ու կաթնամթերքի 11-13 տոկոսը, մսի ու մսամթերքի 8-10 տոկոսը, մրգի ու հատապտուղների 28-30 տոկոսն է ապահովվում: Գյուղատնտեսական արտադրանքի, հումքի և պարենամթերքի որոշ տեսակների ներմուծումը ոչ միայն սեփական արտադրության այլընտրանքի է վերածվել, այլև ավանդական միջմարզային պարենային կապերի կտրուկ կրճատման է հանգեցրել, գյուղատնտեսական արտադրանքի առանձին տեսակների արտադրության գծով մասնագիտացված գոտիների զարգացումն է արգելակել:

---

[3] Այս և հաջորդ հաշվարկները կատարել ենք ՀՀ վիճակագրական կոմիտեի աշխատակազմի պարենային ապահովության վիճակագրության բաժնի և ՀՀ մարզպետարանների գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունների տվյալների խմբավորված վերլուծության հիման վրա:

Այնինչ աշխատանքի տարածքաճյուղային բաժանման զարգացած համակարգը նպաստում է յուրաքանչյուր մարզի և, որպես մեկ ամբողջություն, հանրապետության ագրարային հատվածի գործառույթների, գյուղատնտեսական արտադրանքի, հումքի և պարենամթերքների ծախքերի կրճատմանը և որակի բարձրացմանը: Այն էլ ավելի մեծ նախադրյալներ ունի կատարելագործման համար, որքան որ մարզային, ճյուղային, ներճյուղային և գոտիական մասնագիտացումն է հստակ դրսևորվում, միջմարզային ապրանքափոխանակությունը, միջտնտեսական կոոպերացիան և ագրոարտադրական ինտեգրումն են զարգանում: Դրանց զարգացման մեջ կարևոր դեր են խաղալու պետությունը, նրա կարողությունը և հնարավորությունը հստակ հովանավորական ազգային ագրարային քաղաքականություն վարելու միջոցով դրական ներգործություն ունենալու այդ բարդ և շարժուն գործընթացների վրա: Դրա համար հարկավոր է հետևյալը:

Առաջին, անհրաժեշտ է նոր պետական ագրարային քաղաքականություն, քանի որ աշխատանքի տարածքաճյուղային բաժանումը՝ որպես հանրապետության պարենային անվտանգության ապահովման հիմք, ընդգրկում է բոլոր մարզերն ու տարածաշրջանները և տնտեսության ագրարային հատվածի ուղղություններն ու գործունեության տարբեր բնագավառները: Նրա առանձնացումն ազգային, սոցիալ-տնտեսական քաղաքականության հարաբերականորեն ինքնուրույն մաս կապված է այն հսկայական դերի հետ, որը խաղում է ագրարային հատվածը հասարակության սոցիալ-տնտեսական կյանքում սննդամթերքի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովման գործընթացում: Նոր քաղաքականությունը տնտեսության ագրարային հատվածի զարգացումն առավելագույն չափով կողմնորոշելու է մեծ մասշտաբի ազգային հիմնախնդիրներ լուծելուն, այսինքն՝ հանրապետության պարենային անվտանգության նպատակակետին հասնել ագրարային հատվածը գիտատար և նորարարական տեխնոլոգիական ճյուղի վերածելու, գյուղական տարածքներն ավելի համաչափ զարգացնելու հաշվին: Որպես ագրոպարենային համակարգի հիմնական ճյուղ նրա ռազմավարական ուղղությունը ագրարային հատվածի հետևողական ինտենսիվացումն է, գյուղատնտեսական ապրանք արտադրողների կոոպերացումը, արտադրություն-վերամշակում-իրացում շղթայի կատարելագործումը և գյուղում կյանքի արմատական բարելավումը, որոնք թույլ են տալիս հայրենական պարենամթերքի ֆիզիկական և

տնտեսական մատչելիության մակարդակով հանրապետության բնակչությանը հուսալի մատակարարում ապահովել, հիմնավորված չափերով ներմուծվող պարենամթերքների արագացված փոխարինում և արտահանման ուղղվածություն ունեցող պարենային ապրանքների ու գյուղատնտեսական հումքի ծավալների զգալիորեն ավելացումը իրականություն դարձնել:

Յու. Սուվարյանը, ընդհանրացնելով վերոհիշյալ ձևակերպումը, տվել է նրա հետևյալ բնորոշումը. «Գյուղատնտեսության ինտենսիվացումը մշակովի հողատարածությունների սահմանափակության պայմաններում երկրի պարենային անվտանգության ապահովման գլխավոր ուղին է»[4]:

Երկրորդ, անհրաժեշտ է մարզային ու տարածաշրջանային ագրարային քաղաքականությունը փոխել, աշխատանքի բաժանման առավելությունների լիակատար օգտագործմանը, միջմարզային ապրանքափոխանակության զարգացմանն անցնել, որում բոլոր մարզերն ու տարածաշրջաններն են մասնակցելու անկախ նրանից, թե նրանք ինչպիսի մասնաբաժին են գրավում գյուղատնտեսական արտադրանքի, հումքի և պարենամթերքի արտադրության և սպառման մեջ, ինչպիսի դեր են խաղում առևտրի և միջմարզային ապրանքափոխանակության մեջ:

Այս համատեքստում մարզային և տարածաշրջանային ագրարային քաղաքականության կատարելագործման համար նախատեսվում է.

հանրապետության և նրա առանձին մարզերի ու տարածաշրջանների ագրոկլիմայական ներուժի օգտագործման բարելավում, ռեսուրսատնտեսում, գյուղատնտեսական արտադրանքի, հումքի և պարենամթերքի առանձին տեսակների արտադրության արդյունավետության աճ և կայունություն ապահովող գյուղատնտեսական արտադրության մեջ լավագույն աշխատանքի տարածքաճյուղային բաժանման համար անհրաժեշտ կազմակերպչատնտեսական պայմաններ ձևավորել, ինչպես նաև առանձին դրանց տեսակների գծով արագացված ներմուծման փոխարինում ապահովել և արտահանման ուղղվածություն ունեցող գյուղատնտեսություն զարգացնել,

գյուղատնտեսական արտադրության և գյուղական տարածքների սոցիալական ոլորտի նախ և առաջ սահմանամերձ, լեռնային ու

---

[4] Սուվարյան Յու. Մ., Տնտեսական զարգացման որակական բնութագրիչները և գերակայությունները, «Լրաբեր հասարակական գիտությունների» (656), մայիս-օգոստոս, 2019, էջ 94:

բարձր՝ լեռնային գոտիներում և նրանց հավասարեցված ազգային փոքրամասնություններով բնակեցված գյուղական համայնքներում սոցիալ-տնտեսական պայմանների կտրուկ արտահայտված տարբերակումը նվազեցնելու համար պետական աջակցության առավել արդյունավետ մեխանիզմներ գործարկել, գյուղական տարածքների համաչափ զարգացման ծրագրերին համապատասխանող սպառման ծավալներ, որակ և ծառայություններ մատուցելու ժամկետներ ապահովող սոցիալական ու ինժեներային ենթակառուցվածքների արագացված զարգացման հաշվին այդ տարածքներում բնակչության և գյուղատնտեսական ապրանքարտադրողների սոցիալ-տնտեսական անհավասարությունը հաղթահարել,

ազգային փոքրամասնությունների ավանդական գյուղատնտեսական արտադրության կայուն զարգացման ընթացքն ապահովել, տեղական արտադրության գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման համար սեփական բազան ամրապնդել և արտահանման ուղղվածություն ունեցող գյուղատնտեսությունը զարգացնել:

Պետք է հատուկ ուշադրություն դարձնել գյուղական աղքատության առավել բարձր մակարդակ ունեցող Շիրակի (42,2%), Լոռու (29,4%), Տավուշի (25,6%) մարզերի համապատասխանաբար հյուսիս-արևմըտյան, հյուսիսային ու լեռնանտառային տարածաշրջաններին և գյուղական բնակչության ու գյուղատնտեսական արտադրության գրեթե ամենուրեք կրճատվող Տավուշի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերին, լեռնային ու բարձրլեռնային տարածաշրջաններին և իրենց զարգացման առանձնահատկություններով նրանց հավասարեցված մյուս գյուղական տարածքներին ու կենսապահովման ձևավորված ավանդույթներով ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքներին, ինչպես նաև աշխատուժի ապահովվածության համեմատաբար բարձր մակարդակով աչքի ընկնող Արարատյան դաշտի և Սևանի ավազանի գյուղատնտեսական գոտիների մարզերին ու տարածաշրջաններին, հանրապետության սահմանամերձ ու դատարկվող գյուղական համայնքների զարգացման առանձնահատկությունների հաշվառմամբ տնտեսության ագրոպարենային համակարգին՝ ընդհանրապես և գյուղատնտեսությանը՝ մասնավորապես[5]: Միաժամանակ որպես ագրոպարենային համակարգի, նախ և առաջ ագրարային հատվածի գործառության, նորարարական-ներդրումային մոդելների կենտրոններ

[5] Տե՛ս «Պարենային ապահովություն և աղքատություն, 2020 թ. հունվար-դեկտեմբեր», «Վիճակագրական տեղեկագիր», Եր., 2020, էջ 74-76:

գյուղատնտեսական արտադրանքի, հումքի և պարենամթերքի որոշ տեսակների արտադրության ոլորտում խոշոր միջմարզային ու մարզային նորարարական-ներդրումային նախագծեր մշակել, ինտենսիվ և մրցունակ գյուղատնտեսական արտադրություն վարելու համար բարենպաստ ագրոկլիմայական պայմաններով և տնտեսվարման ազգային-պատմական առանձնահատկություններով աչքի ընկնող մարզերի ու տարածաշրջանների զարգացումը խթանել, մարզային ու միջմարզային պարենային քլասթերներ ձևավորել:

Յուրաքանչյուր մարզի և տարածաշրջանի տեղը և դերը աշխատանքի տարածքաճյուղային բաժանման մեջ լիակատար հաշվի առնելու համար անհրաժեշտ է գյուղատնտեսական արտադրության բազմակողմանիորեն հիմնավորված մասնագիտացման և տեղաբաշխման համահանրապետական ծրագիր մշակել: Դրա հիման վրա նպատակահարմար է գյուղատնտեսական արտադրանքի առանձին տեսակների արտադրության խոշորամասշտաբային մասնագիտացված գոտիներ կազմավորել, ագրոպարենային համակարգի վերամշակող ճյուղերի հնարավոր զարգացման հաշվառմամբ գյուղատնտեսական արտադրության հիմնավորված ներմարզային տեղաբաշխում իրականացնել, մարզային, միջմարզային և ԵԱՏՄ-ի շրջանակներում միջպետական պարենային քլասթերներ ստեղծել: Դա թույլ է տալիս սոցիալական ոլորտի օբյեկտների, ենթակառուցվածքների, կարևորագույն արտադրական ռեսուրսներով ապահովվածության չափացույցների զարգացմամբ, հանրապետության ագրոպարենային համակարգի հիմնական ճյուղերի ու ենթաճյուղերի զարգացման չափացույցների համաձայնեցվածությունը բարելավել:

Գյուղատնտեսական արտադրության հիմնավորված տեղաբաշխման ու գոտիական մասնագիտացման ուղղությունների զարգացման, փոխադարձ առևտրի ընդլայնման և պարենային ապրանքների ու գյուղատնտեսական հումքի արտահանության ավելացման նպատակով մարզերի ու տարածաշրջանների, ինչպես նաև ԵԱՏՄ երկրների համատեղ գործունեությունը համաձայնեցնել: Միջմարզային ու միջպետական ապրանքափոխանակություն և արտահանություն զարգացնելու համար անհրաժեշտ է նաև գյուղատնտեսական արտադրանքի, հումքի և պարենամթերքի առանձին տեսակների արտադրության ոլորտում նրանց մասնագիտացման խորացման հիման վրա գյուղատնտեսական արտադրության մեջ աշխատանքի տարածքաճյուղային

բաժանման ընդհանուր ծրագիր մշակել և նրա կատարումն ապահովել:

Նկատի ունենալով, որ հանրապետությունում կազմավորված վարչատարածքային բաժանման մարզային սխեման հիմնական գծերով համապատասխանում է գյուղատնտեսական գոտիներին, կառավարելիության տեսակետից գոտիական մասնագիտացումը և արտադրության հիմնավորված տեղաբաշխումը նպատակահարմար ենք համարել ներկայացնել գյուղատնտեսական գոտիների կտրվածքով:

Քաղաքական-վարչական միավորների սահմանման դեպքում, երբ հաշվի են առնվում նաև ուրիշ, ոչ տնտեսական գործոններ (ազգային, կառավարչական, բնական և այլն), անհամապատասխանությունը անխուսափելի է վարչական և տնտեսական շրջանցման միջև: Գլխավորն այն է, որ այդ անհամապատասխանությունը դժվարություններ չհարուցի որևէ ավելի կարևոր խնդրի լուծման համար, օրինակ՝ ապրանքային տնտեսության և ինքնակարգավորվող համակարգի շուկայի օրենքներով զարգացող շուկայական տնտեսության նպատակը կանխորոշող ընդհանուր խնդիրը և ագրարային հատվածի զարգացման ընթացիկ տասնամյա ժամանակահատվածում առաջադրվող մասնավոր խնդիրը, որը միտված է հանրապետության պարենային անվտանգության ու գյուղական տարածքների համաչափ զարգացման և ճյուղի գերակայությունների ու տարբեր գոտիների նախընտրելի մասնագիտացման առավել նպատակամետ գործունեության ուղենիշներին:

Ի դեպ, ՀՀ գյուղատնտեսության շրջանցման այժմեական գործածություն ունեցող գոտիական սխեման անցյալ դարի 50-ական թվականներին է մշակվել, և դրան համապատասխան հանրապետության տարածքը 9 գյուղատնտեսական գոտիների է բաժանվել:

Արարատյան դաշտի գյուղատնտեսական գոտու մարզերում ու տարածաշրջաններում մեծ ծավալ և նշանակություն է ստանալու բնակչությանը, այդ թվում՝ մայրաքաղաքին, արդյունաբերական կենտրոններից Արարատին և մյուս քաղաքներին խաղողով, պտուղներով ու հատապտուղներով, վաղահաս կարտոֆիլով, ջերմասեր բանջարեղենով, կաթով ու կաթնամթերքով, տավարի, խոզի ու թռչնի մսով ու ձվով բնակչության ապահովված լինելուն կողմնորոշված գյուղատնտեսական արտադրանքի արտադրության բազմակողմանի զարգացումը: Այստեղ կանխատեսելի են ինչպես ներքին շուկայի տարողություններն ընդլայնելու, այնպես էլ միջմարզային ապրանքափոխանակության ու արտահանության որոշ ուղղություններով պարենային ապրանքների

լայն տեսականու (մրգերի, բանջարեղենի վերամշակում ու պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների) արտադրության ոլորտում ագրոպարենային համակարգի վերամշակող ձեռնարկությունների տեխնիկական արդիականացում, արտադրական հզորությունների լիարժեք օգտագործում, արտաքին չափանիշներին համապատասխանող էկոլոգիապես մաքուր և շուկայական մրցունակ արտադրանքի մատակարարում նախատեսող խոշոր ներդրումային նախագծերի իրագործում: Արմավիրի և Էջմիածնի տարածաշրջաններում անհրաժեշտ է բարձրարժեք յուղատու տեխնիկական մշակաբույսերից խորդենու և քունջութի աճեցումը վերականգնել, որոնց արտադրանքը մեր հանրապետությունում կարող է աչքի ընկնել բարձր որակով, տարածվելու լայն հնարավորություններով, հատկապես բնակչությանն աշխատանքով ապահովելու և փոքր տարածություններից մեծ եկամուտ ստանալու ակնկալությամբ:

ՀՀ-ում բնակվող ազգային փոքրամասնություններից ասորի գյուղական բնակչությունը ներկայումս շատ թե քիչ համահավաք ապրում է Արարատյան դաշտի գյուղատնտեսական գոտում (Դիմիտրով, Վերին Դվին համայնքներում), որտեղ փոփոխված շուկայական տնտեսության միջավայրին հարմարվելով՝ ավանդական երկրագործական կացութաձևը նրանց նախընտրելի մասնագիտացումը բնորոշող առանձնահատկությունն է. ասորիները հմուտ բանջարաբույծներ, այգեգործներ և դաշտավարներ են[6]:

Նախալեռնային գյուղատնտեսական գոտու աշխարհագրական դիրքը, ագրոկլի-մայական պայմանները և ավանդական մասնագիտացման առանձնահատկությունները հիմք են հանդիսանում ինչպես բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ, մրգեր ու հատապտուղներ, բանջարեղեն, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության (կաթ, տավարի, ոչխարի ու թռչնի միս, մեղր) զարգացման համար: Ագրոպարենային համակարգի երրորդ ոլորտի ճյուղերից առավել զարգացած են սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունները (մսի ու մսամթերքի և մրգերի ու բանջարեղենի վերամշակում ու պահածոյացում, կաթնամթերքի, թորած ալկոհոլային խմիչքների և ալյուրի արտադրություն): Միջմարզային ապրանքափոխանակության և արտահանության համար կարևոր է հատկապես սննդամթերքի լայն

[6] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր (խմբագիր՝ Յու. Մկրտումյան)», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 92, 93:

տեսականու և ըմպելիքի ռեսուրսներ ձևավորելու ուղղությամբ աշխատանքների գործնականորեն իրականացնելի դարձնելը:

Միաժամանակ նպատակահարմար է ներդրումներն ուղղել կաթնամթերքի և մսի ու մսամթերքի վերամշակման ձեռնարկությունների արդիականացմանը և նոր ձեռնարկությունների կառուցմանը:

Այս գյուղատնտեսական գոտու նախընտրելի մասնագիտացման ուղղությունների զարգացմանը մեծապես նպաստելու է նաև մերձերևանյան դիրքը:

Ապարան-Հրազդանի կամ Կենտրոնական (լեռնային) գյուղատնտեսական գոտում կարևոր նշանակություն ունի բնակչության գործունեության ավանդական ձևերի պահպանման և հետագա կատարելագործման նպատակամետ ուղղվածությունը: Հանրապետության ագրարային հատվածի աշխատանքի տարածքաճյուղային բաժանման մեջ գոտու մասնագիտացումը կանխորոշում են մսակաթնաբրդատու ոչխարաբուծությունը, հացահատիկային տնտեսությունը և կարտոֆիլագործությունը, որոնք արտահանության ռեսուրսային ներուժի ձևավորման համեմատաբար բարձր հնարավորությունների են տիրապետում:

Ազգային փոքրամասնություններից եզդիները (եզդի քրդերը) ավելի համահավաք ապրում են Արագածի տարածաշրջանի Սիփան, Ավշեն, Ճարճակիս, Միջնատուն, Ջամշլու, Ալագյազ, Շենկանի, Ռյա-Թազա, Սադունց, Միրաք, Կանիաշիր գյուղերում, որտեղ ավանդական էթնիկական մասնագիտացման ուղղություններից նախապատվելու արժանի է նախ և առաջ մսակաթնաբրդատու ոչխարաբուծությունը, քանի որ ներճյուղային մասնագիտացման այս ուղղությունը շատ ավելի եկամուտ է ապահովում: Ուստի մսակաթնաբրդատու ոչխարաբուծության հետագա զարգացման խնդիրը հրատապ է բարձրարդյունք ոչխարների տարբեր ցեղատեսակների բազմացման առումով:

Այս գյուղատնտեսական գոտու ագրարային հատվածի ավանդական էթնիկական մասնագիտացման ուղղությունները պահպանելու և կատարելագործելու նպատակով անհրաժեշտ է գյուղատնտեսական ապրանք արտադրողների էկոլոգիական գործելակերպի և արտադրության ինտենսիվացման զուգընթաց կարևոր նշանակություն տալ արոտավայրերի բարելավմանը և հիմնավորված օգտագործմանը:

Հետևաբար, Կենտրոնական գյուղատնտեսական գոտում մասնագիտացված գյուղատնտեսական արտադրություն հնարավոր է զարգացնել միայն ագրոարտադրական ռեսուրսային ներուժի ընձեռած

հնարավորություններին համապատասխան տարածքի կազմակերպման հարմարվողական-լանդշաֆտային սկզբունքով առաջնորդվելու դեպքում, քանի որ բնական համալիրի բոլոր տարրերի (խոնավություն, հողային պայմաններ, ջերմություն, կողմնադրություն և այլն) բարձր տարածքաժամանակային փոփոխականության, բարդ լանդշաֆտային կառուցվածքի և երկրագործության ավանդական գործելաձևերի կիրառման դեպքում դրանք թույլ կայունությամբ են բնորոշվում:

Կարծում ենք, քննարկվող գյուղատնտեսական գոտու երկրագործության ու հողերի վատթարացման գործընթացների կասեցումը և բուսաբուծության ճյուղում աշխատանքի արտադրողականության զգալիորեն բարձրացում ապահովող մոտեցումը ծախսերի միաժամանակյա կրճատման դեպքում գիտականորեն հիմնավորված հենք են ստեղծում գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման հարմարվողական-լանդշաֆտային սկզբունքում կազմակերպելու և բնակչության սոցիալական բարեկեցություն ապահովելու համար:

Գյուղական բնակչության աճի համեմատաբար բարձր ցուցանիշներով աչքի ընկնող Սևանի ավազանի գյուղատնտեսական գոտում նպատակահարմար է հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի, մսի ու կաթի արտադրության ու վերամշակման ավելացման, պտղահատապտղային ենթաճյուղի զարգացման ուղղություններով ծրագրերի իրականացումը: Այս գյուղատնտեսական գոտին կարտոֆիլի ու հացահատիկի (հատկապես կարտոֆիլի) արտադրության և արտահանման ռեսուրսների ձևավորման համեմատաբար բարձր ներուժի է տիրապետում: Միաժամանակ նպատակահարմար է ներդրումներն ուղղել սննդամթերքի՝ ներառյալ խմիչքներն ու ալրաղաց-ձավարեղենը, ձեռնարկությունների արդիականացմանը և նորերի կառուցմանը:

Սևանի ավազանի գյուղատնտեսական գոտու համար կարևոր ուղղություն է համարվում ձկան և ձկնեղենի ռեսուրսների հիմնավորված օգտագործումը, որոնք թույլ են տալիս մասամբ բարձրացնել տեղական բնակչության զբաղվածությունը և նրա եկամուտները: Մարզային ծրագրերի և նորարարական-ներդրումային նախագծերի մշակման և իրականացման դեպքում հարկավոր է որպես բնակչության կողմից ձկից և ձկան մսից պատրաստվող սննդամթերքի սպառման ավելացման կարևոր աղբյուր նախատեսել լճակային ձկնաբուծության զարգացման հնարավորությունների ավելի ամբողջական օգտագործումը: Բացի դրանից, անհրաժեշտ է աջակցություն ցուցաբերել ձկնաբուծական արտադրանքի վերամշակման կարողությունների ընդլայնման

և ձկնեղենի արտահանման մեխանիզմների մատչելիության ու շուկայահանման դժվարությունների հաղթահարման ուղղությամբ: Հետևաբար, ենթաճյուղի զարգացման ռազմավարությունն այնպիսին է լինելու, որ կարճաժամկետ տնտեսական շահերը չհակասեն Սևանա լճի ջրային պաշարների պահպանության, արդյունավետ ու խնայողաբար օգտագործման և դրանք կայուն մակարդակի հասցնելուն միտված երկարաժամկետ ծրագրերին:

Շիրակի գյուղատնտեսական գոտու տարածաշրջանների ագրարային հատվածի ենթաճյուղերի, ագրոպարենային համակարգի վերամշակող ճյուղերի զարգացումը կանխորոշվելու է առավելապես Գյումրիի և մյուս քաղաքների, այդ թվում՝ կաթի և կաթնամթերքի, տավարի ու ոչխարի մսի՝ բնակչության պահանջներով, միջմարզային ապրանքափոխանակության համար հացահատիկի ու կարտոֆիլի և համեմատաբար ցրտադիմացկուն բանջարանոցային մշակաբույսերի արտահանման ռեսուրսների ձևավորման ներուժով:

Այս գյուղատնտեսական գոտու հյուսիսային ենթագոտու Աշոցքի և Ամասիայի տարածաշրջաններում հետագա զարգացում են ստանալու նաև կաթնամթերքի լայն տեսականու, հատկապես կարագի և պանրի տեսակների արտադրությամբ մասնագիտացած ձեռնարկությունների արդիականացումը և նորերի կառուցումը:

Բացի դրանից, առաջիկա հեռանկարում նախատեսվում է Ախուրյանի և Անիի տարածաշրջաններում տեխնիկական մշակաբույսերի (շաքարի ճակնդեղի և գանգրավուշի) վերականգնման ուղղությամբ ինտենսիվ աշխատանքների իրականացում, իսկ ներքին և արտաքին շուկաներում պահանջարկի աճին համապատասխան թռչնաբուծությունն ու խոզաբուծությունն են զարգանալու: Այդ ենթաճյուղերի արտադրանքի առանձին տեսակների արտադրության մասնագիտացման ուղղությամբ արտահանության ներուժ է ձևավորվելու:

Լոռի-Փամբակ և Հյուսիսարևելյան գյուղատնտեսական գոտիների մարզերում ու տարածաշրջաններում ագրարային հատվածի ենթաճյուղերի, ագրոպարենային համակարգի երրորդ ոլորտի ճյուղերի զարգացումը հիմնականում պայմանավորում են կարտոֆիլով, խաղողով, պտուղներով ու հատապտուղներով, գինիներով ու թորած ալկոհոլային խմիչքներով, անասնաբուծական արտադրանքով, հատկապես տավարի ու խոզի մսով բնակչության պահանջների բավարարումը: Վերջին ժամանակներս արագ տեմպերով զարգացում է ապրում նաև ալպիական մեղվաբուծությունը:

Հաստատագրվում է նաև ավանդական անասնաբուծական ենթաճյուղերից գոմեշաբուծության կաթնամսատու ուղղության վերականգնման և զարգացման միտումը: Ի դեպ, գոմեշի կաթն աչքի է ընկնում բարձր յուղայնությամբ, որից ստանում են բարձրորակ ու բարձրարժեք կաթնամթերքներ (յուղ, պանիր, մածուն), որոնք էլ մեծ պահանջարկ ունեն ներքին և արտաքին շուկաներում:

Այս գյուղատնտեսական գոտիների տարածաշրջաններից Տաշիրը և Իջևանը համապատասխանաբար կաթնամթերքների (պանիր, կարագ) և գինու արտադրության ու արտահանման ռեսուրսների ձևավորման համեմատաբար բարձր ներուժի են տիրապետում: Նոյեմբերյանի տարածաշրջանում առաջնային խնդիր է պտղաբուծության զարգացման համար ինտենսիվ այգիների հիմնումը, արտադրված պտղի պահածոյացումը, չրի արտադրության կազմակերպումը և պատրաստի արտադրանքի իրացումը հանրապետությունում և արտերկրում:

Հյուսիսարևելյան գյուղատնտեսական գոտու լեռնա-անասնաբուծության ենթագոտու համար հեռանկարային նախընտրելի մասնագիտացման ուղղություններից մեկը պետք է համարել անտառալեռնային խոզաբուծության զարգացումը. վայրենաբույս աճող անտառային ծագման պտուղները հաջողությամբ օգտագործվում են կենդանիներին կերակրելու համար: Այստեղ տնտեսական կոոպերացիայի հիմքի վրա արտադրության մասնագիտացում և համակենտրոնացում իրականացնելու դեպքում կարելի է 2500-ից ոչ պակաս, այդ թվում՝ 250 մերուններ, գլխաքանակով միջտնտեսական խոզաբուծական ձեռնարկություն կազմակերպել:

Վերոհիշյալ գյուղատնտեսական գոտիների մի շարք տարածաշրջանների համար, առավելապես լեռնաանտառային լանդշաֆտների գոտում, կարևոր մասնագիտացման ուղղություն է համարվելու վայրենաբույս աճող բույսերի և նրանց պտուղների, հատապտուղների, սնկերի, վայրի կենդանիների ու թռչունների մսային ռեսուրսների օգտագործումը, որոնց մթերումը և վերամշակումը թույլ են տալիս մասամբ բարձրացնել տեղական բնակչության զբաղվածությունը և նրանց եկամուտները: Այս ուղղությամբ իրականացվող միջոցառումները պետք է նկատի առնեն նաև լեռնաանտառային լանդշաֆտներում խոցելի էկոհամակարգերի պահպանությունը՝ անտառների ոչնչացումից խուսափելու նպատակով:

Ագրարային հատվածի զարգացման խորհրդային փուլում Լոռի-Փամբակը մասնագիտացված տոհմային տավարաբուծության զարգացման գլխավոր կենտրոնն էր, որտեղ տոհմային և ապրանքային ֆերմաների նախիրի վերարտադրության ու համալրման համար բարձր մթերատու տոհմային կենդանիներ էին բուծում (այստեղ էր կենտրոնացված բազմացվող ցեղային մատղաշների գրեթե 1/3-ը): Սակայն շուկայական բարեփոխումների տարիներին հանրապետությունում սկսեցին ավելի քիչ ուշադրություն դարձնել նախիրի որակական կազմի մշտապես բարելավում ապահովող մասնագիտացված տոհմաբուծական տնտեսություններին: Գյուղատնտեսական կենդանիների բոնիտավորման ծավալները կրճատվեցին միջին հաշվով 4,5-5 անգամ: Չնայած հանրապետությունում գործում են մի քանի մասնավոր տոհմային անասնաբուծական տնտեսություններ (Սևանի տարածաշրջանի Լճաշեն համայնքում, Մասիսի տարածաշրջանում և այլն), այնուամենայնիվ դեռևս մասնագիտացված բաժնետիրական ընկերություններ չեն ձևավորվել, աննշան չափերով հանրապետության բնակլիմայական պայմաններին հարմարեցված կովկասյան գորշ տավարի կաթնամսատու ուղղության տոհմային գործի անհրաժեշտ պայմաններ են ստեղծվել, մսատու թռչնաբուծության ենթաճյուղում մայրական գլխաքանակը չի բավականացնում, դժվարություններ կան բարձր մթերատու տոհմային կենդանիների՝ ցուլերով համալրելու հետ կապված և այլն:

Հետևաբար, համահանրապետական և մարզային մակարդակներով բարձր մթերատու տոհմային կենդանիների բուծման պետական աջակցությունն անհրաժեշտ նախապայման է տեղական բնակլիմայական պայմաններին հարմարեցված ցեղական կենդանիների առավել գնահատված նախիրը պահպանելու և վերարտադրության ու համալրման գլխաքանակը կայունացնելու համար:

Լոռի-Փամբակի գյուղատնտեսական գոտում ազգային փոքրամասնություններից ռուս մոլոկանները, առավել համահավաք, հիմնականում բնակություն են հաստատել Կրուգլայա Շիշկա, Մեղովկա, Պուշկինո, Միխայլովկա, Պրիվոլնոյե, Բովաձոր, Ուրասար, Լերմոնտովո և Ֆիոլետովո գյուղական համայնքներում: Հաշվի առնելով քննարկվող գյուղատնտեսական գոտու լեռնային սևահողերի համեմատական բարձր ագրոարտադրական ներուժի ընձեռած հնարավորությունները, ինչպես նաև աճեցվող մշակաբույսերի կենսաբանական առանձնա-

հատկությունները, ռուս մոլոկաններով բնակեցված գյուղական համայնքներում ագրարային հատվածի ավանդական էթնիկական մասնագիտացումը կանխորոշվում է ցրտադիմացկուն բանջարանոցային (կաղամբ, գազար, սեղանի ճակնդեղ, վարունգ և այլն), ուրիշ մշակաբույսերի աճեցման ինտենսիվացման, տավարաբուծության, կաթնամսատու ու կաթնատու և անասնաբուծական տնտեսությունների մասնագիտացման այլ ուղղություններ կազմավորելու հնարավորություններով: Այստեղ միջմարզային և միջտարածաշրջանային ապրանքափոխանակության և արտահանման նպատակով հետագա զարգացում են ստանալու թթուների (հիմնականում կաղամբի թթու) լայն տեսականու արտադրանքը վաճառքի հանելու նպատակով մասնագիտացող տնտեսությունները: Անասնաբուծության նախընտրելի մասնագիտացման ուղղություններից զարգացած են նաև բանող ու սպորտային ձիաբուծությունը, ռուսական ծանրաքաշ ձիու խառնուրդը՝ մոլոկանի ցեղատեսակ ձիերի գերակշռությամբ, և ջրլող թռչունների բազմացումը:

Լոռի-Փամբակի գյուղատնտեսական գոտում բնակություն հաստատած ազգային փոքրամասնություններից են նաև հույները, որոնց գյուղական բնակչության արդի տեղաբաշխումը հիմնականում ընդգրկում է Յաղդան, Կողերս և Մադան գյուղերը, որտեղ ձևավորվել են ինչպես գյուղացիական, այնպես էլ գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ: Այդ կատեգորիայի տնտեսությունների մեծամասնության համար ավանդական նախընտրության արժանի աշխատանքային գործունեությունը երկրագործության ու անասնաբուծության ենթաճյուղերի զուգակցումն է, որոշ գյուղերում նաև արհեստագործությունը:

Հարավային՝ Վայքի և Զանգեզուրի գյուղատնտեսական գոտիների մարզերն ու տարածաշրջաններն աշխատանքի ներհանրապետական տարածքաճյուղային բաժանման համակարգում ավանդաբար մասնակցություն են ունենում որպես կաթնամսատու տավարաբուծության ու մսակաթնաբրդատու ոչխարաբուծության, մերձարևադարձային պտղաբուծության, կերարտադրության ու հացահատիկային տնտեսության նախընտրելի մասնագիտացման ուղղություն ունեցող տարածքաարտադրական համալիրներ:

Զանգեզուրի գյուղատնտեսական գոտու պտղաբուծության ենթաճյուղում առանձնահատուկ տեղ է գրավում Մեղրու չոր մերձարևադարձային գոտին, որտեղ գետահովիտների ուղղորդ լանջերի յուրացման և էրոզիայի դեմ պայքարելու համար ստեղծվել են բազմաստիճան դարավանդներ կորիզավորների ու ընկուզավորների հետ մեկտեղ

գրեթե բոլոր չոր մերձարևադարձային պտղատեսակները (ընդհանուր տարածքի 15-20 %-ը) աճեցնելու համար: Այստեղ ընդլայնվում է նաև արդեն վերամշակված մրգերից պատրաստված պահածոների արտադրությունը, որոնց արտադրանքի արդյունք համարվող մուրաբաները, ջեմերը, մրգահյութերը մեծ պահանջարկի են արժանանում ներքին և արտաքին շուկաներում:

Վայքի գյուղատնտեսական գոտում կաթնամթերքի արտադրության արդյունավետության տեսանկյունից հեռանկարային է ոչխարի ու այծի կաթի արտադրությունը, որը կարճաժամկետ ռազմավարության կիրառմամբ ներքին պահանջարկի բարձր մակարդակ է ձեռք բերել, իսկ երկարաժամկետ ռազմավարության կիրարկմամբ՝ արտաքին շուկայում հայտնվելու հեռանկար:

Այս համատեքստում ավելի շատ նախընտրությունը այծաբուծության զարգացմանն է տրվելու, և այն հավանաբար կաթնամսատու տավարաբուծությանն է փոխարինելու, հատկապես գյուղացիական տընտեսություններում և տնտեսվարման մյուս փոքր ձևերում: Կաթնատու այծերի արդիական ցեղերը կերային ռեսուրսների պակաս ունեցող Վայքի գյուղատնտեսական գոտու տարածաշրջաններում համեմատական առավելություններ ունեն, քանի որ նրանց կաթնատվությունը որոշ դեպքերում յուղի ու սպիտակուցների պարունակությամբ վերահաշվարկված գերազանցում է կովի կաթնատվությանը: Այծի կաթից պատրաստված պանիրը բարձր գին ունի ներքին շուկայում և արտահանման տեսանկյունից հեռանկարային է: Այնուամենայնիվ, ենթաճյուղի այս մասնագիտացման ուղղությամբ իրականացվող միջոցառումները պետք է հաշվի առնեն նաև այծաբուծության համար անբարենպաստ բուսածածկ ունեցող արոտավայրերի հիմնավորված օգտագործման և բարելավման խնդրի ծագելը, քանի որ նրանք շրջակա միջավայրի վատթարացման պատճառ են դառնում՝ արագացնելով հողերի էրոզիան:

Ներքին և արտաքին շուկաներում պահանջարկի աճին համապատասխան Վայքի գյուղատնտեսական գոտում վերստին իր կանոնավոր գործունեության վիճակին է բերվելու նաև ծխախոտագործության հետագա զարգացումը:

Երրորդ, անհրաժեշտ է գյուղական տարածքների համաչափ զարգացման պետական քաղաքականություն իրականացնել հետևյալ առաջնահերթ ուղղություններով.

տնտեսության ագրարային հատվածի զարգացման և բազմազանության համար պայմանների ստեղծում, գյուղական բնակչության էթնոժողովրդագրական վիճակի, կյանքի որակի բարելավում ու աղքատության մակարդակի կրճատում և զարգացման ռեսուրսների նկատմամբ նրա մատչելիության մակարդակի բարձրացում:

Էկոլոգիապես հիմնավորված են բնօգտագործման գործունեությունը, տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացումը, կադրերի պատրաստման ու վերապատրաստման կազմակերպումը և որակավորման բարձրացումը, կայուն զարգացման ծրագրին համահունչ ազգային փոքրամասնություններով բնակեցված գյուղական համայնքներում տնտեսության ագրարային հատվածի ավանդական ենթաճյուղերի զարգացումը և ավանդական ապրելակերպի ու տնտեսական գործունեության պահպանումը:

Համեմատական առավելություններն օգտագործելու, առավել հավանական աճի բևեռներ ու կենտրոններ փնտրելու և զարգացման գերակա ուղղություններին հետամուտ լինելու միջոցով անհրաժեշտ է լուծել գյուղական տարածքների համաչափ զարգացման խնդիրը, որը թույլ է տալիս որպես հանրայնորեն կարևոր գործառույթ կատարող և հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման մեջ զգալի ներդրում ունեցող միասնական տարածքաարտադրական համալիր գյուղական տարածքները համաչափորեն զարգացնել: Սակայն գյուղական տարածքների կողմից իրենց համազգային գործառույթները կատարելու և տարածքային համաչափ զարգացման խնդիրները լուծելու համար բարենպաստ սոցիալ-տնտեսական և էթնոժողովրդագրական պայմանների ստեղծումն անհնարին է առանց աշխատանքի տարածքաճյուղային բաժանման անշրջելի գործընթացի կատարելագործման:

3. Եզրակացություն

Համահանրապետական ծրագրերի իրականացման շրջանակներում տնտեսության ագրարային հատվածի պետական կարգավորումը թույլ է տալիս ծրագրային միջոցառումների ֆինանսավորման մեխանիզմի միջոցով բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերում մարզային ու տարածաշրջանային տնտեսական նշանակություն ունեցող ծրագրերի աջակցության հաշվին ներգործություն ունենալ գյուղատնտեսական արտադրության հիմնավորված տեղաբաշխման և գոտիական մասնագիտացման վրա: Մարզային ու տարածաշրջանային տնտեսական նշանակության ծրագրերի ինքնաֆինանսավորման մեխանիզմի

մշակման ու ներդրման օգնությամբ անհրաժեշտ է ագրարային հատվածի տնտեսվարողներին նպատակային և հասցեական աջակցություն ցույց տալ (պետական աջակցությունն ուղղվելու է հողային ռեսուրսների օգտագործման արդյունավետության մակարդակի բարձրացմանը, տարբեր գյուղատնտեսական գոտիներում հեռանկարային նախընտրելի մասնագիտացման ուղղությունների խորացմանը, գյուղական տարածքների համաչափ զարգացմանը, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմանը և այլն):

Ինչպես ամբողջ հանրապետության, մարզերի ու տարածաշրջանների ագրարային քաղաքականության, այնպես էլ նրանց տարաբնակեցման համահավաք և ցրված գյուղական համայնքների ու բնակավայրերի համար հատուկ ծրագրեր մշակելու դեպքում անհրաժեշտ է ազգային փոքրամասնությունների ավանդական էթնիկական մասնագիտացումը հաշվի առնել: Ագրարային հատվածի մասնագիտացման խորացման գործընթացում նրանց համար նախատեսվող պետական աջակցության միջոցառումների համակարգը պետք է հաշվի առնի տարբեր գոտիների նախընտրելի մասնագիտացման ուղղությունների և ազգային փոքրամասնությունների տարաբնակեցման բնույթի միջև գոյություն ունեցող փոխադարձ կապը, գյուղական համայնքների ու բնակավայրերի հեռացվածությունը մարզկենտրոններից ու տրանսպորտային մայրուղիներից, ինչպես նաև հանրապետական, մարզային և համայնքային աջակցություն ապահովելու միջոցառումներում ագրոպարենային համակարգի արտադրական շղթայի բոլոր փուլերի ընդգրկումը: Այդպիսի միջոցառումների շարքում է դասվում ազգային փոքրամասնությունների ավանդական էթնիկական մասնագիտացման ենթաճյուղերի աջակցության և զարգացման համար վարկային երաշխիքների, դրամաշնորհների և տեխնիկական օժանդակության տրամադրումը(այս ուղղությամբ նախընտրելի են համարվում կաթնամթերքի ու մսամթերքի առանձին տեսակների արտադրության ու արտահանման և վաճառահանության, մանր եղջերավոր անասունների վերարտադրության, բանող ու սպորտային ձիաբուծության, ալպիական մեղվաբուծության զարգացման, ջրլող թռչունների բազմացման խթանման և այլ ծրագրեր):

Կարծում ենք, ազգային ագրարային քաղաքականության ակնկալվող բարեփոխումները դրականորեն են ներգործելու ինչպես ամբողջ հանրապետության գյուղական բնակչության ագրոարտադրական

գործունեության հետագա մասնագիտացման խորացման և աշխատանքի տարածքաճյուղային բաժանման բարելավման գործընթացի, այնպես էլ ազգային փոքրամասնությունների ավանդական էթնիկական մասնագիտացման ենթաճյուղերի կայունացման վրա:

Որպես պետական կարգավորման գործիքակազմ կարելի է օգտագործել գյուղատնտեսական արտադրանքի առանձին տեսակների արտադրության սահմանված չափաքանակների՝ քվոտավորման մեխանիզմը՝ դրանց հիմնավորված տեղաբաշխման և գոտիական մասնագիտացման հաշվառմամբ: Սահմանված չափաքանակներին համապատասխան անհրաժեշտ է գյուղատնտեսական արտադրության հիմնավորված տեղաբաշխման և գոտիական մասնագիտացման կատարելագործումը խթանող պետական աջակցության ուղղակի և անուղղակի միջոցառումներ կիրառել, որը վերջին հաշվով թույլ է տալիս ոչ միայն հանրապետության պարենային անվտանգությունն ապահովել, այլև նրա ակտիվ մասնակցությունը ԵԱՏՄ-ի առևտրում և տարածաշրջանային երկրների շուկաներում, որտեղ արտահանման ուղղվածության արտադրությունների խթանման համար համեմատական առավելություններ ունենալով հանդերձ՝ հնարավոր է պահանջարկը և սահմանված չափորոշիչները բավարարել*: Այսինքն՝ այս շուկաներում արտահանության հիմնական պաշարներ ստեղծելու միջոցով աստիճանաբար արտահանվող գյուղատնտեսական արտադրանքի որակը և քանակակազմը բարելավել հետագայում առավել պահանջկոտ եվրոպական շուկաներ ներթափանցելու համար:

---

* Որոշ հաշվարկների համաձայն, եթե ՌԴ-ից Հայաստանին քվոտա տրվի Մոսկվային ընդամենը 15 % գյուղատնտեսական մթերքներով ապահովել, ապա դա բավական է՝ հայրենական ագրարային հատվածն արագ տեմպերով զարգացնելու համար (տե՛ս «Առավոտ» օրաթերթ, 2020թ., 21 նոյեմբերի):

Գրականություն

1. «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր (խմբագիր՝ Յու. Մկրտումյան)», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 164 էջ:
2. *Մանասյան Վ.*, Գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման հարմարվողական-լանդշաֆտային կազմակերպման համակարգը ՀՀ-ում, «Բանբեր ՀՊՏՀ-ի», №1, 2017, էջ 20-30:
3. *Սուվարյան Յու. Մ.*, Տնտեսական զարգացման որակական բնութագրիչները և գերակայությունները, «Լրաբեր հասարակական գիտությունների», №2 (656), 2019, էջ 87-104:
4. ՀՀ Վիճակագրական կոմիտե, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով», Եր., 2020 թ., armstat.am/am/?nid=81gid=2324
5. ՀՀ Վիճակագրական կոմիտե, «Պարենային ապահովություն և աղքատություն, 2020 թ. հունվար-դեկտեմբեր», «Վիճակագրական տեղեկագիր», Եր., 2020, armstat.am/am/?nid=81gid=2384:
6. ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարություն, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, №60 (794), 1 դեկտեմբերի, 2010, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2010, էջ 67-117:
7. «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղություններ-ի 2020-2030 թվականների ռազմավարություն», e-gov.am/u-files/file/decress/kar/2019/12.1/19_1886-1.PDF

Ընդունված է 26.8.2021
Գրախոսված է 21.9.2021

НАЦИОНАЛЬНАЯ АГРАРНАЯ ПОЛИТИКА РА: ОСНОВА ТЕРРИТОРИАЛЬНО-ОТРАСЛЕВОГО РАЗДЕЛЕНИЯ ТРУДА

Манасян В.Г.

Аннотация. Необходимость выработки новой национальной аграрной политики, и с целью обеспечения республики отечественной производственной продукцией и сельскохозяйственной базой определена аграрная политика отдельных сельскохозяйственных поясов и значение межрегионального обмена продукцией. Предложены мероприятия по совершенствованию организационного механизма развития территориально-отраслевого разделения труда в сельском хозяйстве республики, формирования единой базы сельскохозяйственного производства, сырья и продовольственной продукции, а также по доставке продукции на региональные рынки Евразийского и Европейского союзов. Обсуждены насущные социально-экономические и агроэкологические проблемы аграрных отраслей республики, в которых традиционно заняты национальные меньшинства. Научно обоснована необходимость перехода к адаптивно-ландшафтному земледелию для обеспечения функционирования сельскохозяйственного производства, социального благополучия населения, экологизации отечественного аграрного сектора.

Ключевые слова: территориально-отраслевое разделение труда, рациональное размещение и поясная специализация, продовольственное самообеспечение, производитель в сельском хозяйстве, сельскохозяйственные поясы, национальные меньшинства, адаптивно-ландшафтная система.

NATIONAL AGRICULTURAL POLICY IN RA AS A FOUNDATION IN THE WORK TERRITORIAL BRANCHING DEVELOPMENT

Manasyan V.G.

Summary: The need for exploitation of the new national agricultural policy was substantiated in this context. The importance of interstate good exchange and separate agricultural regional policies has been highlighted which tends to provide the country with domestically produced food and agricultural raw materials. Steps have been offered to accomplish the organizational-economical mechanisms related to the development of the work territorial branching in the country's agricultural production as well as to shape agricultural production, raw materials and united food production system. Social-economical and agro-ecological multi-layered questions have been analyzed related to the traditional ethnic agricultural specialization of national minorities in Armenia. The key point is the need for the reasonable placement of the adaptive landscape system to ecologize the domestic agricultural sector, to increase the social welfare of the population.

Key words: work territorial branching, reasonable placement and zonal specialization, food self-sufficiency, agricultural producer, agricultural zones, national minorities, adaptive landscape systems.